ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/18 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «24» սեպտեմբերի 2019թ.

2019թ-ի սեպտեմբերի 24-ին՝ ժամը 10:30-ին, ՀՀ, ք. Երևան, Փ. Բյուզանդի փ. 1/3 շենք հասցեում գտնվող «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի վարչական շենքում տեղի ունեցավ ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/18 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

Հ. Առաքելյան	«Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի փոխտնօրեն՝ նախագահ.
Վ. Գալուստյան	«Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի Գլխավոր հաշվապահ՝ անդամ.
Ն. Ավագյան	«Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի մարդկային ռեսուրսների կառավարիչ՝ անդամ.
Վ. Սուքիասյան	«Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի գնումների համակարգող՝ քարտուղար:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հ. Առաքելյանը, իսկ քարտուղարն էր՝ Վ. Սուքիասյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/18 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/18 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/18 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Վ. Սուքիասյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/18 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը քարտուղարի կողմից նույնությամբ ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/18 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

Որոշվեց՝

1. Վ. Սուքիասյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/18 ծածկագրով գնմանն ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.
1) «Մեդտեխսերվիս» ՍՊԸ՝ բավարար"

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

2. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/18 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/18 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Սուքիասյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Առաքելյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Վ. Գալուստյան _____

Ն. Ավագյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Սուքիասյան _____